

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/3-2

ք. Երևան

«13» հոկտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Դեղձուտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ՎՏԵՆՈՒՄ

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատունքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամեկտ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 605 000 000 (վեց հարյուր հինգ միլիոն) ՀՀ դրամ, որից 100 833 333 (մեկ հարյուր միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25%-ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.1.2 Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների դիմաց 2020թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է 72 592 400 (յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր իննսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից 12 098 733 (տասներկու միլիոն ինսունուր յոթ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվելի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ

որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023307
ՀՎՀՀ 02565827


ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Շիրակի փակուղի 4
«Հայրիզնեսքանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983

Գլխավոր քարտուղար՝



Տնօրեն՝



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Արարատի մարզի Դեղձուտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
1.1 Համաշինարարական աշխատանքներ					
Հողային աշխատանքներ					
1	III-րդ կարգի գրունտի մշակում փոստրակում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	1100	900	990000
2	III-րդ կարգի գրունտի մշակում խրամոլիներում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	175	500	87500
3	Փոստրակի և խրամոլիների հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	60	2100	126000
4	Գրունտի քանդում պահուստում 0.6մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոմեքենաների վրա	խմ	1055	600	633000
5	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորությունից (հետլիցքի համար)	խմ	1055	1100	1160500
6	Գրունտի ետլիցք հատակների տակ քուլոզերով	խմ	2190	300	657000
7	Գրունտի աստիճանաքար տուփանում օդաճնշական ձեռքի տուփանիչով	խմ	2190	300	657000
8	Գրունտի ետլիցք հիմքերի ծոց ձեռքով, տուփանումով	խմ	200	1730	346000
Ընդամենը հողային աշխատանքներ					4,657,000.0
Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր					
9	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	խմ	58.2	60000	3492000
10	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5դասի բետոնով	խմ	70.5	60000	4230000
11	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	335.65	62000	20810300
12	Ամրան Փ8A240C	տն	8.242	320000	2637408
13	Ամրան Փ16A500C	տն	6.197	300000	1859070
14	Ամրան Փ18A500C	տն	5.509	300000	1652580
15	Ամրան Փ25A500C	տն	0.115	300000	34560
16	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5.1	68000	346800
17	Ամրան Փ8A240C	տն	0.510	320000	163200
18	Ամրան Փ22A500C	տն	1.742	300000	522600
19	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.232	500000	116050
20	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ B-20 դասի բետոնով	խմ	198 95	68000	13528600
21	Ամրան Փ6, 8A240C	տն	1 697	320000	543040

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
22	Ամրան Փ10A500C	տն	3.084	300000	925200
23	Ամրան Փ12A500C	տն	9.748	300000	2924430
24	Ամրան Փ16A500C	տն	0.507	300000	151980
25	Ամրան Փ22A500C	տն	1.551	300000	465300
26	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.288	500000	144000
27	Բետոնե աստիճանների պատրաստում (-0.45 նիշից դեպի +0.3նիշ B-7,5 դասի բետոնով	խմ	2.3	200000	460000
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից ցածր				55,007,118.0
	ե/բետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից բարձր				
28	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	63.9	68000	4345200
29	Ամրան Փ8A240C	տն	2.494	320000	798173
30	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.131	300000	39300
31	Ամրան Փ22A500C	տն	7.452	300000	2235720
32	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.01	500000	5200
33	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.500	70000	35000
34	Ամրան Փ8A240C	տն	0.023	320000	7488
35	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.051	300000	15360
36	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	6.80	75000	510000
37	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	141.54	72800	10304112
38	Ամրան Փ6, 8A240	տն	3.077	320000	984784
39	Ամրան Փ8A500C	տն	1.189	320000	380352
40	Ամրան Փ12A500C	տն	2.017	300000	605058
41	Ամրան Փ16A500C	տն	1.497	300000	448950
42	Ամրան Փ18A500C	տն	4.683	300000	1404930
43	Ամրան Փ25A500C	տն	0.115	300000	34572
44	Ամրան Փ28A500C	տն	0.744	300000	223170
45	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.219	500000	109500
46	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	29.21	75000	2190750
47	Ամրան Փ6, 8A240	տն	0.605	320000	193516.8
48	Ամրան Փ12A500C	տն	1.601	300000	480240
49	Ամրան Փ18A500C	տն	0.180	300000	54000
50	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	162.78	30000	4883520
51	Նույնի բետոնացում B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	103.2	75000	7738500
52	Ամրան Փ6, 8A240C	տն	0.634	320000	202998.4

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
53	Ամրան Փ10A500C	տն	8.935	300000	2680470
54	Ամրան Փ12A500C	տն	7.859	300000	2357730
55	Ամրան Փ16A500C	տն	1.175	300000	352560
56	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1.91	64000	122240
57	Ամրան Փ6A240	տն	0.058	320000	18560
58	Ամրան Փ12A500C	տն	0 246	300000	73800
59	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3.3նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	221.5	69500	15394250
60	Ամրան Փ6A240	տն	0.415	320000	132672
61	Ամրան Փ12A500C	տն	19.457	300000	5837100
62	Ամրան Փ14A500C	տն	5 474	300000	1642110
63	Ամրան Փ18A500C	տն	0.013	300000	3900
64	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով ՄՀ-1 (6հատ)	խմ	6.80	95000	646000
65	Ամրան Փ8A240	տն	0.184	320000	58752
66	Ամրան Փ18A500C	տն	0.367	300000	110160
67	Միաձույլ ե/բ հովիարի պատրաստում +2,7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՍ-1, +հեծան ՄՀ-1)	խմ	1.7	95000	161500
68	Ամրան Փ8A240	տն	0.029	320000	9184
69	Ամրան Փ8A500C	տն	0.073	320000	23296
70	Ամրան Փ12A500C	տն	0.008	300000	2400
71	Ամրան Փ16A500C	տն	0.046	300000	13800
72	Ամրան Փ18A500C	տն	0.015	300000	4500
73	ԱՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում +0.45 դեպի +3.3նիշ B-20 դասի բետոնով	խմ	1.9	60000	114000
74	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.5	100000	50000
75	Ամրան Փ8A240	տն	0.055	320000	17504
76	Ամրան Փ16A500C	տն	0.274	300000	82170
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				68,139,052.0
	Միջնորմներ				
77	Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397.58	3600	1431288
78	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	խմ	142.3	22000	3129940
79	Ամրան Փ8A500C	տն	3.216	320000	1029087.04
	Ընդամենը միջնորմներ				5,590,315.0
	Դռներ և պատուհաններ				
80	Այլոմինե, ապակեխաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36.31	68000	2468916.8



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
81	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ) V-5	քմ	1.92	64000	122880
82	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն 4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան) V-4	քմ	1.20	56000	67200
83	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս	քմ	17.04	44000	749760
84	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2.30	36000	82944
85	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ	քմ	25.0	25000	625750
86	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-1	հատ	13	80000	1040000
87	Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-2—Դ-3	հատ	41	65000	2665000
88	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-4—Դ-4*	հատ	4	280000	1120000
89	Մետաղական, խույ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5	քմ	1.7	44000	74817.6
90	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԲՓ-021 նախաներկով	քմ	3.4	2000	6800
91	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.3	35000	183848
92	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	12.6	38000	478800
93	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	100.1	33000	3303630
94	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.2	28500	1828902
95	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգեի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	86.2	3000	258660
	Ընդամենը դռներ և պատուհաններ				15,077,908.4
	Հատակներ				
96	Հողի տոփանում խճաքարով	քմ	1680	700	1176000
97	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12.5 դասի բետոնից	խմ	252 0	45000	11340000
98	Լոյնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8.3կգ/քմ)	տն	13 9	300000	4183200
99	Խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	1840.0	2000	3680020
100	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ. բիտումի մածիկի վրա	քմ	1643 2	2000	3286460
101	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	577.68	1700	982056
102	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	1262.33	1900	2398427
103	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	454.34	8000	3634720
104	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	16.71	10000	167100

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
105	Նույնի. ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ	քմ	16.71	1700	28407
106	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	զծմ	171.8	1300	223340
107	Խեցեխալերով (նվազագույնը 8մմ հաստ) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	123.34	8000	986720
108	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	զծմ	80.1	1300	104117
109	Վինիլային (հետերոգեն ՊՎՔ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	934.7388	8500	7945279.8
110	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎՔ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.4352	13000	3346657.6
111	Կավրոլինից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116.8	6000	700800
112	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	2000	68640
	Ընդամենը հատակներ				44,251,944.4
	Տանիք				
113	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3.681	750000	2760600
114	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0.181	800000	144716.8
115	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6.616	750000	4962000
116	ՆԷ-7—ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0.198	800000	158384
117	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	19.468	700000	13627600
118	ՆԷ-7—ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1.165	800000	931896
119	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԲՓ-021 նախաներկով	տն	31.309	30000	939256.38
120	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1329	1300	1728310
121	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	35.2	170000	5989100
122	Նույնի երեսում (տակից) ՕՍՈՒ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1749.19	4800	8396112
123	Գոլորշամեկուսիչ շերտի փռում	քմ	1749.19	500	874595
124	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքամաբակե սալերով	քմ	1749.19	.11000	19241090
125	ՕՍՈՒ սալերի տեղադրում 10մմ հաստ. (բիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	2019.7	3500	7068950

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
126	Քիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված բիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	2019.7	5900	11916230
127	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	35.2	10000	352300
128	ՕՇՈ սալի մասնակի լաքապատում	քմ	297.2	500	148590
129	Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ, ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	156.9	4500	706050
130	Ջրընդունիչ ծագարների տեղադրում Φ150մմ	հատ	19	5500	104500
131	Ջրի ստացման խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	95.6	4700	449414
132	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0.707	700000	494900
133	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.707	30000	21210
	Ընդամենը տանիք				81,015,804.2
	Հարդարման աշխատանքներ				
134	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2847.05	1900	5409395
135	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	313.02	1900	594738
136	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	2500	25330
137	V-2, V-4, V-5 Վիտրաժների վերնի մասի լցափակում գիպսոկարտոնե հարթասալերով	քմ	12.9	8000	103200
138	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	1051.08	1900	1997052
139	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	98.22	1500	147330
140	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2879.0	1700	4894303.4
141	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	313.02	1500	469530
142	Առաստաղների բարձրորակ ներկում լատեկսային ներկով	քմ	1512.81	1700	2571777
143	Առաստաղների բարելավված ներկում լատեկսային ներկով	քմ	43.04	1500	64560
144	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	364.66	1900	692854
145	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	307.56	13000	3998280
146	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9.5մմ հաստության, ստատների տեղադրումով	քմ	461.73	7200	3324456
147	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հորիզ	332	2000	664000
148	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	55.18	9000.00	496620
149	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0.593	900000	533584.8
150	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.593	30000	17786.16
	Ընդամենը հարդարման աշխատանքներ				26,004,796.4
	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ				
151	Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	խմ	32.9	3800	125020

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
152	Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	23.8	40000	952000
153	Բետոնե աստիճանների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	10.3	49000	504700
154	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով	քմ	12.42	21000	260820
155	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ բազալտե սալերով	քմ	51.51	13800	710838
156	Խամքարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	խմ	21	3800	79800
157	Նույնի. միաձույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	3.2	35000	112000
158	Թեքահարթակի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	10.8	43000	464400
159	Նույնի. միաձույլ ե/բետոնե բազրիթների պատրաստում 120մմ հաստության B-12,5 դասի բետոնով	խմ	0.2	70000	14000
160	Ամրան Ф10A500C	տն	0.02	300000	6000
161	60x40x3մմ պողպատե ուղղանկյուն խողովակներից բռնածող	տն	0.162	500000	81075
162	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.162	30000	4864.5
	Ընդամենը արտաքին աստիճաններ և թեքահարթակներ				3,315,517.5
	Արտաքին հարդարում				
163	Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ հաստ.) բազալտե մանրաթելային սալերով	քմ	1411.6	6100	8610760
164	V-4, V-5 արտաքին վիտրաժների վերևի մասի երեսապատում պլյումինե "Alukobond" թիթեղով	քմ	3.5	54000	189000
165	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով	քմ	1302.36	3600	4688496
166	Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով	քմ	1302.40	1700	2214080
167	Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ. խարսխումով	քմ	143.2	20000	2864000
168	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 30մմ հաստ 150մմ լայնությ.	քմ	13 61	21000	285705
169	Բացվածքների լցափակում ապակեբլոկներով	քմ	0.96	61000	58560
170	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում հարդարման աշխատանքների համար	քս ուղ ստեխ	523	1000	523000
	Ընդամենը արտաքին հարդարում				19,433,601.0
	ԸՆԴԱՄԵՆԸ 1.1 Համաշինարարական աշխատանքներ				322,493,056.9
	Ամբարձի				
171	Պտուտակային, ապակեպատ ամբարձիչ հաշմանդամ երեխաների համար 320կգ բեռնունակությամբ FORSTOR կամ համարժեք	հատ	1	2600000	2600000
	ԸՆԴԱՄԵՆԸ Ամբարձի				2,600,000.0
	1.2. Ձևուցում				
